

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

# ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## XIV

### 2011

Երևան 2011

---

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 001

ԳՄԴ 72

Գ 602

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագրական խորհուրդ

Աշուա Մելքոնյան, Խաչիկ Բաղիկյան, Արամ Ջոսյան, Սարգիս Պետրոսյան,  
Լարիսա Եզանյան, Համազասպ Խաչատրյան, Արմեն Հայրապետյան,  
Կարինե Բագեյյան, Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան

**Խմբագրությամբ քան. գիտ. դոկտոր  
պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի**

Գիտական աշխատություններ / ՀՀ ԳԱԱ Շիրակի  
հայագիտական հետազոտությունների կենտրոն;  
Խմբ.՝ Ս. Հայրապետյան.- Եր.: Գիտություն, 2012  
Հատոր 14 / Խմբ. խորհուրդ՝ Ա. Մելքոնյան և ուրիշներ.-  
186 էջ:

ՀՏԴ 001

ԳՄԴ 72

ISBN 978-5-8080-0890-8

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2012

Республика Армения  
Национальная академия наук  
**Ширакский центр арменоведческих исследований**

# НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК  
**XIV**  
EDITION

**R E A S E A R C H P A P E R S**

Shirak Centre of Armenian Studies  
National Academy of Sciences  
Republic of Armenia

Издательство "Гитутюн" НАН РА      "Gitutyun" Publishers NAS RA

---

Ереван 2011 Yerevan

**Публикуется по решению Ученого совета  
Ширакского центра арменоведческих исследований НАН РА.**

**Редакционная коллегия:**

**Ашот Мелконян, Хачик Бадикян, Арам Косян, Саргис Петросян,  
Лариса Еганиан, Амазасп Хачатрян, Армен Айрапетян, Карине Базеян,  
Карине Саакян, Асмик Арутюнян**

**Под редакцией доктора фил. наук,  
профессора Серго Айрапетяна**

**Published by arrangement of the Scientific Council  
of Shirak's Research Centre NAS RA.**

**Editing stuff:**

**Ashot Melkonyan, Khachik Badikyan, Aram Qosyan, Sargis Petrosyan,  
Larisa Eganyan, Hamazasp Khachatryan, Armen Hairapetyan, Karine Bazeyan,  
Karine Sahakyan, Asmik Harutunyan**

**Edited by Doctor of Philology, professor Sergo Hayrapetyan**

## Հասմիկ ԳԱԼՈՍՅԱՆ

### ՍԱՏԱՆԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ժողովրդական գրույցը վիպական բանահյուսության տարածված տեսակներից է: Զրույցները ոչ մեծ ծավալի պատումներ են, մեկորդվագանի պատճենագրներ, որուել ժամավրդական լեզվին բնորոշ պատճենագրով ներկայացվում են ժողովրդի պատճենական ու կենցաղային անցուղարձերը և սնահավատական պատճենագրությունները: Սնահավատական գրույցները ենթանուական և քրիստոնեական հավատալիքների հետ կապված ոգեղեն արարածների և գերբնական երեւույթների, առարկաների մասին պատճենագրություններ են, ոչ ենթարային արձակ ժանրի ստեղծագործությունները: Վերջիններս իրենց ձևով, բնույրով և կենցաղավարման եղանակով խիստ տարբերվում են միապական բանահյուսության մեջ մասնող մյուս բոլոր ժանրերից:

Սնահավատական գրույցը պատճեններն ու լսողները հավատում են դրանց բովանդակությանը, ներկայացնում իրեն իրենց և իրենց մտերիմների կամ ծանոթների հետ կատարված իրադրություն: Զրույցը պատճենում է ասացողի կամ ասացողին հայտնի մարդու անունից: Սնահավատական գրույցները իիմա էլ կենսունակ են և կենցաղավարում են Հայաստանի մի շարք ազգագրական շրջաններում: Սույն աշխատանքը կատարված է 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև արդի գրառումներում առկա սնահավատական գրույցների իիման վրա: Հորդածի համար որպես սկզբնադրյուր օգտագործվել են Վերջին տարիներին կատարված բանահյուսական գրառումները, «Ազգագրական համեսս»-ում<sup>1</sup>, «Հայ ազգագրություն և բանահյուսություն»<sup>2</sup> մատենաշարում առկա տպագիր նյութերը, Գ. Մրկանձայանի<sup>3</sup>, Գ. Հովսեփյանի<sup>4</sup>, Յ. Շանհիկյանի<sup>5</sup>, Աղ. Մխիթարյանի<sup>6</sup>, Ե. Լալայանի<sup>7</sup>, Մ. Աբեղյանի<sup>8</sup>, Մ. Կառայեանի<sup>9</sup>, Վ. Սվազլյանի<sup>10</sup>, Գ. Գյուղացյանի<sup>11</sup> և այլոց ժողովածուներում տեղ գտած սնահավատական գրույցները, ինչպես նաև Ա. Ղազիյանի հոդվածը<sup>12</sup>:

Մեր օրերում շատ են տարածված գրույցներ շար ոգիներից մեկի՝ սատանայի մասին, և սույն հոդվածում ներկայացվում են սատանա-ոգու գործառույթներն ըստ տարածված սնահավատական գրույցների:

Սատանա բառը ծագում է հին եբրայերեն satan բառից, որը նշանակում է ուսուխ, եակառակորդ, թշնամի, եակառակ դիմակաց, շար ոգի, դի: Սատանա բառը փոխառությամբ տարածված է մի շարք լեզվներում՝ ասորերեն satana, ուստի սատանա:

<sup>1</sup> Ազգագրական համդես, գ. IX, 1902, գ. X, 1903, գ. XII, 1905, գ. XIV, 1906, Թիֆլիս, (այսուհետ 'ԱՀ').

<sup>2</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, 1978, հ. 10, 1980, հ. 12, 1981, Եր., (այսուհետ 'ՀԱԲ').

<sup>3</sup> Մրկանձայանց Գ., Երկեր, հ. 1, Եր., 1978:

<sup>4</sup> Գարեգին Մարկարագ Յովսէփինանց, Ժողովրդագրական նիւթեր, գիրք գ, N 56, Փշտանքներ ժողովրդական բանահյուսութինից, Թիֆլիս 1892:

<sup>5</sup> Շանհիկյան Յ. Կ., Հնուքիմք Ակնայ, N 89, Թիֆլիս, 1895:

<sup>6</sup> Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Փշտանք Շիրակի ամբարներից, Աղ. Մխիթարյանց, Սովորա-Ակնանդրապոլ, ՌՅԾ-1901, (այսուհետ 'ԷԱԾ'):

<sup>7</sup> Լալայան Եր., Երկեր, հ. 1, 1983, հ. 2, 1988, հ. 3, 2004, Եր. (այսուհետ 'ԵԼ'):

<sup>8</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Եր., 1975, (այսուհետ 'ՄՍ'):

<sup>9</sup> Մեսրոպ Կոսյեան, Բաղու, Բալուի կենաքեն առնուած պատկերներ, յուշեր, շափածոյ քեր-քրածներ եւ արձակ էջեր, Ամբիլիաս-Լիքանան, 1965:

<sup>10</sup> Սվազլյան Վ., Կիշիկիա, արևմտահայոց բանավոր ակամբուրյունը, Եր., 1994:

<sup>11</sup> Գյուղացյան Գ., Մուսա լնուան ազգագրությունը, Եր., 2001:

<sup>12</sup> Ղազիյան Ա., Հայ ժողովրդական սնահավատական գրույցների դասակարգման հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, N 8, էջ 78:

արարեքն չայտու (շայրան), երօվակերեն սածառ, հունարեն *Satanas*, լատինեքն *satanas*, հարավսլավերեն *sotona*, գերմաներեն *satan* և այլն:<sup>13</sup>

Ե. Լալայանը, խոսելով Զավախչի հայ ժողովրդի հավատալիքների մասին, ներկայացնում է մի ականջորդություն սատանա-ոգու առաջացնամ մասին. «Աստված ստեղծել է ինը դաս երեշտակ՝ մարդակերպ, թևափոր, աներևույթ, բարի էակներ, որոնց պաշտամունքն էր վառարաննել Երրորդորյունը և կատարել նրա երանանները. Սակայն այս ինը դասից երկուսն ամբարտավաճացել են և ցանկացել աստված դաշնալ. Տերն անձնել է նրանց, և սրանք երեք օր շարունակ կարկուի պես երկնքից վայր են բափվել. Յոր դաս երեշտակները խնդրել են ողորմիլ և «Տեր ողորմնա» են ասել, իսկ նարդիկ գարեւորած «Կեցո՛, Տե՛ր» աղաղակել. Այս երկու դասը վայր բափվելիս երեք դասի են բաժանվել, մին՝ Պեղծենոն, որ մնացել է երկնքի և երկրի միջև, մյուսը՝ Սարայել, որ իջել է երկրիս վրա, և երիորդը՝ Լեկենոն, որ ամցել է անդրոնը. Աստված տարօհնել է, որ այս վայր բափված երեշտակների տեղը լցնեն բարի մարդկանց հոգիները, ուստի և այս հալածված երեշտակների նրեր դասերն էլ բարի մարդկանց սաստիկ թշնամացին են և ամեն կերպ աշխատում են նորուցնել նրանց. Սարայելը «քաց աշքով»՝ ակնհայտնի է խարում մարդկանց ու գրում գործած մնոցերը. Լեկենոնը չար երազներով ու տեսիլքներով է մոլորեցնում, իսկ Պեղծենոնը կարում է եղջյուների ճանապարհը, և եթե «քարության ձնուագիր» չունեն, քաշում տանում է դժոխք, սատանաների ու մեղավորների կայանը, ուր ուսկի արոտի վրա նստած բազավորում է Լեկենոնը. Ժողովուրդն այս վայր բափված երեք դաս երեշտակներին կոչում է սատանա...»<sup>14</sup>:

Նոյն ավանդությունը, որոշ տարբերություններով, հանդիպում ենք Գ. քահանա Նժդեհյանի մոտ. «Աստուած երեշտակները տևողած ժամանակ՝ տասներկու դասի կամ գունդի բաժնեց զանոնք: Այս գունդերնն երեքի գյուսաւորները՝ Սաղրահել (Սադայել), Բենզերուղ և Բելիառ (Բելիար) տեսնելով իրենց բարձրութիւնը ու փառը՝ հապատացան ու Աստուած դէմ ապստամբեցան: Աստուած բարկացավ, և զանոնք իրենց գունդերով իր «Երեսէն»-ներկայութենեն բափեց դեպի Սանդարձանետը՝ ի պատիժ իրենց ամբարտաւանութեան»<sup>15</sup>: Ըստ Լոռու (Բորշալուի գավառ) ժողովրդական հավատալիքների՝ սատանաների գյուսափորը համարվում է Բելյարը, որի որդին կոչվում է Սարին, իսկ աղջիկը՝ Նարմադաշիկ<sup>16</sup>:

Հայ ժողովրդական սնահավատական գրուցներում սատանա ոգին հիմնականում հանդիս է զայիս «սատանա» ընդհանուր անվանք: Սակայն որոշ ազգազրական շրջաններում (Նոր Նախիջևան, Շիրակ, և այլն) սատանա-ոգուն անվանում են նաև մեզմեն աղեկներ, մեզմից լսավեր, քան զնեզ աղեկներ, աղեկանը (Ակն) և այլն: Գր. Գյոզալյանը գրում է, որ «Մուսալեռուն չար ոգուն՝ սատանային, խոսակցության ընթացքում երբեմն «Քան զնեզ աղեկներ» (մեզմից լավը) ասում էին, քայլ անունով նրան չին եիշատակում»<sup>17</sup>: Հայանարար սատանային այսպիսի անվանումը (որու մեզմից լավն են) տրվել է որպես սիրաշահություն՝ զերծ մնալու համար նրա շարագործություններից: Մ. Արենյանը այս առիթով գրում է. «Ժեպետ սրանը այսպիս մարդկային ծագում ունեն և անգամ աստվածային անեծքի տակ են գտնվում, այդուհանդերձ նրանք վեր են կանգնած մարդկանցից: Դրա համար էլ նրանք հաճախ կոչվում են մեզմեն լավաներ կամ մեզմեն աղեկներ: Եթե նրանց շարքերին հավասար դասեն և շարքեր կոչեն, ա-

<sup>13</sup> Աճայշան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Եր., 1979, էջ 179:

<sup>14</sup> ԵԼ, հ. 1, էջ 215-216:

<sup>15</sup> ԱՀ, գ. IX, էջ 267:

<sup>16</sup> ԵԼ, հ. 3, էջ 209:

<sup>17</sup> Գյոզալյան Գ., մշկ. աշխ., էջ 230:

պա նրանք կզայրանան և վրեժինդիր կլիմեն»<sup>18</sup> (ընդգծումը մերն է-Հ. Գ.): Արցախուն, Սյունիքուն, Վարանդայում սատանան ու քաջը նույնանում են<sup>19</sup>: Հարք-Բուլանըխում ու Համշենում սատանային վերի<sup>20</sup> են կոչում, նաև այ<sup>21</sup>, իսկ Ղզարում՝ այ<sup>22</sup>:

Ե. Լարայանը սատան-ոգու աներեւոյր լինելու համագումարը բացառողող մի զրոյց է ներկայացնում. «Երբ Քրիստոսի մայրն ու նորաքրոյրը (Եղիսարեր) Փրկչի գերեզմանի վլա ողբում էին՝ գլխիները քաշ զցած և առանց շորջը նայելու, սատանաները, որ մինչև այդ ժամանակ նարդկանց մեջ էին ապրում և նկատելի էին, կամենալով սրանց ուշը ուրիշ բանի վրա դարձնել, որպեսզի մոռանան Տիրոջը, պարկերի մեջ պրնձե ամաններ էին ածել և նրանց առաջ կանգնել, թիվկրիկացնում էին: Ասովածածինը ետ է նայել և տեսնելով սատանաներին՝ անիծել է, թե՝ «աներեւոյրը պլիք», և այդ օրվանից նրանք աներևութացել են, այլևս նարդկանց չեն երևում»<sup>23</sup>:

Հայաստանի տարրեր ազգագրական շրջաններում գրառած հայ ժողովրական սմահակառական զրայցներում սատանան ունի արտաքին տեսքի գրեթե միենույն նկարագիրը, իհարկե, առկա են նաև տարրերությունները: Ըստ շիրակցիների՝ սատանան «մարդու պես է, հմա մարդ չէ, ինքը սև, երկու շաբալ կուռաշ ու մանոր բիզ-րիզ ամեկաշնէր ունի, պաշը բարակ ու կեռ է, ուստի բրու բարս, ուսից գլուխ վաշչառ մազի մեջ կորել է, մանուր-բզով ծակած աչքերը կրակ զլմանի...»<sup>24</sup>: Զավախիքում սատանային պատկերացնում են «մարդակերպ, թևակոր, բոլորովին սև, մազով ծածկած, երկար ագիռվ, կրամկները դեայի առաջ ուղղված, ոճանք էլ մի կամ երկու եղշյուրով»<sup>25</sup>: Ըստ ալաշկերտացիների «սատանաները թև չունին, որովհետև թափած են անոնք, երբ Աստուած իր երեսն վար ճգեց, բայց իրեշտակներու պես կրնան ամեն տեղ պնդել ու ել և էջ ընել, իրեշտակներու արագութեանք: Իրենց տեսքը, կերպարանքը չափազանց տղեղ է, սև, խաւարապատ, դորս ցցուած ու բարակ այտերով, քրով ու շրբունքներով: Բարակ ու փոքր են նույնպես ծերերը, ոտքերը: Կյունկները դեայի առաջ, և ուսքի ճիւր ու մատները դեայի ետ դարձած: Ունին նաև բարակ ու երկայն պոչ՝ վտիտ կրնակի վրայ ոլորուած, ինչպես կտեսնու պատկերներու մեջ: Այս այլանդակությունները ստացած են Աստծու անեծքով»<sup>26</sup>: Մուսալեռցիների պատկերացմամբ նույնպես սատանան «մարդու կերպարանք ունեն, մազնք ցից-ցից, կոտոշավոր էր, պոչավոր և մի քիչ կուզիկ, ոտքերը բարակ, կազմվածք՝ անճոռնի: Նրանք մեկը մյուսից չեն տարերվում»<sup>27</sup>:

Ազգագրական որոշ շրջաններուն իրարաներժ կարծիքներ ու պատկերացումներ կան սատանայի սեոի ու տարիքի վերաբերյալ: Արդեն նշվել է, որ սատանան նախկինում իրեշտակ էր, իսկ իրեշտակները, դարձյալ ըստ ժողովրական պատկերացումների, ավելի շատ արականի հանգանաք ունեն, քան իգականի, չունեն մահ, ծնունդ, տկարություն<sup>28</sup>:

Զավախիցիների պատկերացմամբ սատանաները երկու սեօի են, որդեննությամբ աճում ու բազմանաւմ են, երբեք չեն մեռնում<sup>29</sup>: Խսկ Աշաշկերտում լրիվ հակառակ

<sup>18</sup> ԱՍ, հ. Է, էջ 86:

<sup>19</sup> ՀԱՐ, հ. 12, էջ 63: ԵԼ, հ. 2, էջ 177: Ա. Ղազիյան, նշվ. աշխ., էջ 78:

<sup>20</sup> Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 45:

<sup>21</sup> ԱՀ, գ. XIV, էջ 137:

<sup>22</sup> ՀԱՐ, հ. 10, էջ 66:

<sup>23</sup> ԵԼ, հ. 3, էջ 209:

<sup>24</sup> ԷԱԺ, էջ 168:

<sup>25</sup> ԵԼ, հ. 1, էջ 216:

<sup>26</sup> ԱՀ, գ. IX, էջ 267-268:

<sup>27</sup> Գյողալյան Գ., նշվ. աշխ., էջ 230:

<sup>28</sup> ԱՀ, գ. IX, էջ 265-266:

<sup>29</sup> ԵԼ, հ. 1, էջ 216:

պատկեր եմք տեսնում. այսուեղ սատանաները «Քրիշտակներու պէս աւելի արականի հանգամանք ունին, քան իգականի, թէև յաճախ կնոջ կերպարանքով կը յայտնուին, և այս աւելի պառաւ կնոց: Չպետք է շփորել փերինները սատանաներու հետ, որովհետև առաջիններու ծագումը շատ ուշ եղած է, կրնան կենակցի մարդերու հետ և զաւակներ ունենալ սատանաները զուրկ են այդ յատկութիւնն, ոչ ծնունդ ունին, ոչ մահ, ոչ եթ-ւանդորին և ոչ մարմնական աճում, ոչ կուտեն և ոչ կը հագնեն: Ասոնք հրեշտակնե-րու նման հաճախ հրաշագործ են»<sup>30</sup>: Ղզլաբրիժների պատկերացմամբ, երեւ սատանան դեմքով տղամարդ էր, նրա ոտքերը սմբակավոր պիտի լինեին, երեւ կիմ՝ պոչ և երկար մազեր<sup>31</sup>: Մուսավելոցինները սատանաներին պատկերացնում էին միշտ շափական տա-րիքում, ծեր կամ երեխա չկար: Ակզրից իջքան որ եղել են, նույն էլ մնում են, այս-ինքն ամ շունեն: Մարդկանց հետ ոչ մի կարգի (սեռային և այլ)<sup>32</sup> կապ ու առնչություն շունեն<sup>33</sup>: Ակնում «աղեկանք սովորաբար ի կերպարանս կնոց»<sup>34</sup> են հայտնովում:

Արճակոմ սատանաները երեխաններ ունենին, որոնց պատկուղիկներ էին անվանում: Վերջիններս պատկերացվում էին թխամորք, խիտ-զանգրահեր, հաստապոշ, ճրագի նման փայլուն աչքերով, գգզզված հանդերձներով մանուկներ՝<sup>35</sup>: Ծիրակում ևս սատանաները երկու սեռի են, հազվադեպ եանդիպում ենք տղամարդու, իսկ հաճախ՝ կնոջ կերպարանքով: Էստ շիրակցիների սատանան նույ քառասուն-քառասունինազ տարեկան արարած է, չի ծերանում: Ծիրակում մեր կատարած բանահյուսական գրառումներուն սատանան հիմնականում կին է, միջին տարիքի, աշխատասեր, քախոս, համեստ արարած: Զրույցներից մնկում սատանան ներկայացվում է նորաշենցի ժենոյի կերպարանքով. «Մեր գեղի (Առաջեն, Արդիկ) Ավիկեց Ենովքը Եզանվարա (Արևշառ) ցախմբան էր: Էղիկ մենակ ջաղաճը կեղնի, եղ օրը աղուն աղցող չի եղնի, նստած կապասէ: Կրսէ, մեզ է աշեմ, օր ջաղաճի քարի տրգեն, են փեռն օր կրֆրոցնե ցուրը, բոլոր տրգեն հարսնիք գեղնի, եղնադ: Կաէ, էզան, բոլորս բըռնին ու խաղցան: Ես, կրսէ, փշարաղվա, տեսա, օր մեզը մազերս կրաշե, մեզը հ'անգամս կրաշե, մեզը ողով կզարգէ, կրսէ, բովս մե բուլավկեմ կար (առաջ զաղայախան են հակե, կոճակ, բուլավկա է էղե վրեն), հանի ու զարզի մեզի դոշին: Սադ փախան, ըսիկ բըռու կայնավ: Լացավ, ըսավ փոքր կրեխա ունիմ, թող տուն կրթամ: Կրսէ չէ, հ'անգամս քաշողը գու չէ՞իր: Դե, ընզի եղնես, տուն բղի կրթանք: Կերթա, ջաղաճը կփագէ ու բդոր բերեզը տուն, կրսէ, եղեք, քաժա կրնիք եմ բերե ընձի: Գելնին կաշեն, օր մարդ, մարդու լման, մեր գեղի Թերոյենց Կարդի լմանը, մենակ ողները, կրսէ, կըրընգները մաղներու տեղն էին, մաղները՝ կըրընգներու: Աւրիշ հեշ մե տարրերություն չկար, նույն մարդը: Բերեզը տուն: Կրնիզը Տիրունը, կրսէ, դէ այ Ենովք, կրսէ, կրեխանց մեջը բան-ման չտարածես, օր վախենան, ես առավողը սաղին կիավաքեմ, կրացատրեմ, օր բսիկ չարք է, գործ չունիք հետքը: Ինչ օր ինքը կենե՝ հազարազը բդի բսես իրան, չբդի բսես՝ էրա՝ կե՛ր, բդի բսես՝ մի՛ էրա, մի՛ կեր, օր էնէ: Էդոր իրեք տարի կպայէն գուները կալվեր, կովերք կկըեր, կարը բերեր վելույով կուլար, անուն, կրսէ, հեշ մե բան չէր խոսի, ինչ օր իրան կիասնիր,

<sup>30</sup> U.S. q. IX, t. 268:

<sup>31</sup> *CUP, h. 10, tg 66:*

<sup>32</sup> Ποιητική παραδοσιακή μέθη υποτάσσεται στην αρχαία φωνητική της γλώσσας και στην αρχαία φωνητική της γλώσσας.

<sup>33</sup> Գյոզայան Գ., Աշվ. աշխ., էջ 231:

<sup>34</sup> Ծանրիկեամ Յ.Կ., Աշվ. աշխ., էջ 152:

<sup>35</sup> *LUP, h. 8, tg 89:*

իերը գիղեր, գեղներ, կեներ: Կերտար որսադ կեստեր, կրսե, մենք հացը կուղեինք, գեղնիր իրա ձեռավ կլցներ, իշկան օր իրան պէտք էր, կուղեր, ամանը կլվար, բղբնգով էլ բսպես պրունզը կջարդեր, տանիր կղներ տեղը: Մե օրը Ենովը հարսներին կրսէ՝ ելէ ք, զնացն ք կալը, տունք կմնան 11 տարեկան ախճզն ու սաղանեն: Սաղանեն գեղնի, տեղը կշինե, ծաշ-մաշ չի էպէ, իերը ըդպես բաների հետ գործ չուներ: Ախճզը ջուր կղնե վեղոյով, օր իրա որրոցի շորերը լվա, սաղանեն կրսե կրողա ս ողներս լվամ, բսիգ կսէ, դէ հա: Կսէ, փեշիս բոլորը բուլավկա, ասեղ կաշարած, բանէ ս, օր ողներս չծագրուէ: Էս ախճզը չի գիղենա, իստակ քանե, քանե քիմի, գեղնի կրսե. Իշկան ալուր ունենաք, տարին քաշուն մեշոկ ալուր բերեք՝ չանաղը հաղղի տները ման զա, դարդակ մնա, իշկան աման-չաման ունենաք՝ պունզ չունենա, ձեզի բսեն «Ծկոց տունեցու անեայդանազը: Ախճզը գեղնի ձվազը՝ հարսի կ, հարսի կ...: Ժենյա կեղնի անունը, եղ մարտը չիղեմ ինչ լեզվով հարցընեզը՝ անունը ի նմ է, էսիդ հողի վրա մաղավ գրեզը՝ Ժենյա, Ժենիզ, ըշտը Թերոյենց Վարդի լմանն էր, Վարդի կ Ժենիզ կզրվեր: Էս ախճզը լուզով կերտա կայր, կրսե, դէ, քելեր, Ժենոն չկա, հարսիկը չկա: Գուկան տուն օր՝ դայրեն գեղնին բցած, ասեղներն էլ սեղնին շարած: Տիրունը քաշէ ախճզան՝ լավ կծեծէ: Իշկան օր էս գիղեմ, բդոնք չորս տղամարդով կաշխաղեին՝ հաց կմուրային, իշկան օր սիպտրկեղնեն կունենային ծալած, դարսած, բանային, կտևսնեին, օր սաղ արուն էր, սաղանելը տանեին արնողեին, բերեին զնեինզը տեղը: Իշկան բաժակ կար՝ պունզը չկար, գդալ՝ պունզը չկար, շերեփ կար՝ պոյք չկար, վեղոր կար՝ կանուերը չկար: Չիդեցողները կրսեին, թէ էս ի նչ վերանա տուն է, կրսեին՝ մեր վրա անեծք կա: Տիրունին անիձել էր սաղանեն, օր էրեխին ծեծել էր, բսել էր՝ սաղ կյանքդ կոբերդ վրա չգան, էնիկ սաղ կյանքը աշկերը բաց քեավ: Բոյով, սիրուն հարս էր, ութ տարեկան էի, կեիշեմ, իերը չէր կրտնա իերնտրույն իրա վրի ասեղները հաներ, բոլորը ժնջիլ քաշեիր կլոր՝ չէր կրտնա միմեն դուրս զար, բդիգ կապվիզը, մոլորիզը: Էդ էլ սաղանի պատմությունը, իլըք ՛՝<sup>36</sup>

Կին-սատանայի ծննդքարերաբյան ժամանակ հաճախս մարդ-դայակ և խարում տանում, որին և վարձատրում են սոխի կամ սխտորի կեղևով ու հալվայով: Սոխի կամ սխտորի կեղևները մյուս օրը ոսկի դրամներ են դառնում, եթե միայն ստացողն անարգելով վայր չի բափէլ<sup>37</sup>: Այս հավատավիքը տարածված է հիմնականում Զավախըում<sup>38</sup>, Կիլիկիայում՝ Հաճընում<sup>39</sup> և նյուս ազգագրական շրջաններում:

Սատանային վերագրվող մի հաւականիշ ընդհանուր է բոլը ազգագրական շրջանների գրույցներում. սատանայի ուաքերն ու լեզուն բարս են: Ամեն ինչ անում է իրեն ասվածին, հրամայվածին հակառակ: Ստ. Լիսիցյանի մեկնարաննամբ «սատանան ամեն ինչ աշխատում է շոտ տալ, բըրսըցնել շարով խափանել ամեն ինչ: Իզուր չէ, որ նրա ուաքի բարերն էլ են շոտ տված՝ կրտնկմներն առաջ, մատները՝ ես: Քաշըն ամեն ինչ բարս ու հակառակ է անում: Եթե պետք էր նրան ջրի ուղարկել, ապա «ջուր բեր» ասելու փոխարեն պետք էր ասել՝ «կուժը վերցրու և ջարդի»<sup>40</sup>:

<sup>36</sup> Մեր բանահյուսական գրառումներից: Բանասաց՝ Մերվենիկի Կամսարի Ազատյան, ծմկ. 1932թ, Արթիկի շրջան, գյուղ Նորաշեն, ջուղիսկ:

<sup>37</sup> Ել, հ. I, էջ 216:

<sup>38</sup> Ել, հ. I, էջ 218:

<sup>39</sup> Սվապյան Վ., մշվ. աշխ., էջ 78:

<sup>40</sup> ՀԱՐ, հ. 12, էջ 64:

Սատանայի բնակության վայրի և մարդկանց երևարու հարցերին վերաբերող տարրերությունները կապված են տվյալ ազգագրական շրջանի բնակչմայական պայմաններից, աշխարհագրական դիրքից ու տեղավայրերից: Առավել հարթավայրային շրջաններում առկա գրույցներում սատանաներն ապրում են չարդախմներում, շրիուներում, քանդկած տներում, վառարանների մեջ, պատերի խոռոչներում, անտառում, գերեզմանատանը, մոռ անկյուններում<sup>41</sup>, առանձների եզերքին<sup>42</sup>, ջրաղացներում, ձիթանքներում, գոմերում, այրերում և անմարդաբնակ տներամ<sup>43</sup>: Մուսա լիում «նրանք բնակիում էին խավարում, նրանց կենտրոնն էր Գարիզո (Փապուղին)»<sup>44</sup>: Արճակում ավանդություններ կան գրառված սատանաների բնակավայրերի մասին: Այսուել ևս պատկերացնում էին, որ սատանաներն ավելի ազատ ու համարժակ ապրում էին բնակավայրերից ենուու ընկած ավերակներում, մոռ ու անմարդաբնակ տեղերում, սակայն ավանդությունը պատճում է, որ «ամենուրեք բնակվող սատանաներն Արճակում ունենին նաև իրենց եատուկ բնակավայրը: Դա գյուղից հեռու, վերևի մասով Աստվածածնա բլուրներին հասած, իսկ ցածի մասով Շնձեմ կոչվող արտերին հասնող բլուրներից մեջի մեջտեղը եղած խոր, քարքարու, երկայն կիրճն էր, որը կոչվում էր Գյազնա: Ահա այդ Գյազնան սատանաների բնակավայրն էր: Լեռնային ծննդաներից գյուղած և իր անցած ճանապարհին պարզված մի փոքրիկ առվակ էր հոսում այդ կիրճի միջով: Վերը՝ կիրճի մեջ, կար մի տեղ, որ շատ ննդ էր, և ջուրը ոչ բե հոսում, այլ վիժում էր ցած: Ջրվեժի այդ մասը կոչվում էր Գյազնի խոհնչք, ուր գրույցի համածայն, անհամար սատանաներ էին աղմկում, հազար ու մի ձայնով ուրում ու կարկանձում: Ոչ եռվիվներն ու գառնարածներն էին այմտեղ հոտը քշում, ոչ կանայք ու աղջիկներն էին Գյազնեն բանջարի գնում, ոչ էլ անցորդներն էին գնում սատանայարնակ Գյազնայով: Ըստ արճակցիների՝ Գյազնի խոհնչքը միշտ էլ լիբն էր ամիսորտակելի շարքերով, որոնք շատ հեռու վայրերից հալածվել եկել էին բարնվելու Ասպածնա գործությունից ու պատսպարեն Գյազնի խոհնչքի մեջ: ... Պապներից եկած երկուղախառն պատումներ կային այն մասին, որ երբ մուրն ընկնում է, Գյազնի մեջ ապրող անհամար շարքերը հազար ու մի սատանայական հնարանքներով խարում են միայնակ ուղևորներին, տաճում Գյազնի խոհնչքը և այնտեղից քաշում դժոխք: Որդոց-որդի ամրացած այս երկուղը ստիպում էր դաշտում աշխատող կանանց մուրն ընկնելիս շանցնել Գյազնի ծորաքերանով...»<sup>45</sup>: Արճակում սատանայարնակ էին համարվում նաև գյուղի հարավ-արևելքում գտնվող Վարակյա տներ կոչված ավերակները<sup>46</sup>:

Ե. Լալայանը վկայում է, որ «Դռնավարզի և Քառասանի, ինչպես և Ազդիսի և Թաղարի (Արցախ) միջև կան խոր ծորեր՝ սաղարթախիտ ծառերով ծածկված: Այս ծորերը կոչվում են Քաջկաձոր և լի են քաջերով՝ սատանաներով»<sup>47</sup>: Ըստ դարարադիների՝ քաջերը (սատանաներ) «ամենուր են՝ ջրում, օդում, ժայռների մեջ, հատկապես մուր անձավներում ու ժայռածերպերում, լրված ջրաղացներում ու ավերակներում: Ավետարանոց գյուղում, մելիքական դարադամներից վեր բարձրացող մուտքը տանում է քարանձավ՝ քաշկատմ»<sup>48</sup>: Իսկ «Ղավախան գյուղի Ակործանը պատճում էր, թե մի օր մի սատանա խարել է իրեն և տարել սատանաների տունը ցույց տվել: Այդտեղ, ասում է նա, եղել է մի գեղեցիկ մուշտակ, մի յաքս (երկժանի) և մի կույտ ածովս: Երբ նա հե-

<sup>41</sup> ՀԱԲ, հ. 10, էջ 66:

<sup>42</sup> Կոպյանն Մ., մշվ. աշխ., էջ 582:

<sup>43</sup> ԵԼ, հ. 1, էջ 216:

<sup>44</sup> Գյազայան Գ., մշվ. աշխ., էջ 231:

<sup>45</sup> ՀԱԲ, հ. 8, էջ 88-89:

<sup>46</sup> Նույն տնդում, էջ 89:

<sup>47</sup> ԵԼ, հ. 2, էջ 177:

<sup>48</sup> ՀԱԲ, հ. 12, էջ 63:

տաքրքրվելով հարցել է, թե ինչի համար են այդ բաները, սատանան պատասխանել է, թե մուշտակը նրա համար է, որ առավոտը ճգեն եկեղեցի գնացող ծերունիների վրա, որպեսի տաքրությունից բուզանան ու եկեղեցի զգնան, յարան՝ որ ճգեն շարը տեսնող և բայու եւանից գնացող երփառաբշխների պարանոցը, իսկ աժոյիսը՝ քսեն իբենց ասածը ուրացողի երեսը»<sup>49</sup>:

Սատանաները հայտնվում են մարդկանց մենակ կամ խմրով, երեկոյան ժամերիմ՝ մուրն ըմկած ժամանակ: Ըստ մուսալեռցիների՝ սատանաները «ճարդուն երրեք խմրով չեն ներկայանում: Ոչ էլ խմրված մարդկանց էին երևում»<sup>50</sup>: Հայտնվում են միայնակ մարդկանց, հավանաբար այն պատճառով, որ մեկին ավելի հեշտ է նորորեցնել ու գցել իրենց բակարդը: Իսկ Ակնում հավատում էին, որ «Մեզմէ ապէկները սպարաբար կանանց կ'երևան»<sup>51</sup>:

Ըստ հայ ժողովրդական սնահավատական գրույցներում առկա պատկերացումների՝ սատանա բռնելու երեք եկմնական տարրերակներ կան: Ի մի քերելով գրավոր աղբյուրներում և գրական ստեղծագործություններում առկա նյութերը, կատարված արդի գրառումները՝ բազմիցս հանդիպում ենք ձիու վրա կուպր քսելու եղանակով սատանա բռնելու տարրերակին: «Օծունում Օսանք, Արդվինում Դավիթ քյոխվանք, Շահալինում Զոշնանց Զոշարը նկատել են, որ իրենց գոմերում ձիերը զիշերը սաստիկ քրտում են, և մազերը եյուսած են լինում. կուպր են քսում ձիերին և բռնում մի-մի սատանա, յոթական տարի աշխատեցնում, հետո արձակում: Սրանք հեռանալիս մի բան էին խնդրել իբր վարձ իրենց յոթ տարվա ծառայության, սրանք էլ մի-մի բռն մոխիր էին տվել, այս պատճառով էլ սրանց տեմերում երբեք մոխիր չի լինում՝ սատանաները հավաքում, տանում են: Մի նույնանման դեպքից հետո արդինեցի Օքարանք ջուր են տվել, և մինչև այժմ էլ սրանց տանը ջուրը բարաքյար չունի, որքան էլ բերեն՝ մի քիչ ենառ ջանում է: Իսկ Շնոր գյուղում՝ Չաժինենց տանք, գդալ երբեք չեր մնում: Մի օր տեսնում են, որ մի կիմ եկավ և գդալները հավաքեց, ուզում է տանի: Տան տղանարդը սրսոտ է լինում. վրա է վազում, մի հաս խփում, վայր ճգում կնոջը, թե՝ այդ ուր ես տանում մեր գդալները:

«Եթ պապը այդ մեզ է տվել,- պատասխանում է կինք և անենտանում: Նոր հարցուիործ են անում, խմանում, որ իրենց պապն էլ մի սատանա է բռնած եղել, յոթը տարի աշխատեցրել և վերջը մի գդալ նվիրեն»<sup>52</sup>: Այս տարրերակը ընդիանրական է ազգագրական բռնոր շրջանների հանար:

Մյուսը՝ սատանայի մազերը կտրելու եղանակով իրենց ենթարկելու տարրերակն է: Ուզումար զյուղում Գորգմանց պապը օջախի մոտից սատանա է բռնում, մազերից մի քիչ կտրում, պահում է: Եթր յոթը տարին լրանում է, սատանան աղաջում է, որ իր մազերը իրեն տան՝ գնա: Սրանք էլ տալիս են»<sup>53</sup>:

Երրորդը՝ սատանային ասեղով բռնելու տարրերակն է: Այս տարրերակը ամենատարածվածներից է և հանդիպում ենք բոլոր ազգագրական շրջաններում առկա գրույցներում: Ակնում հավատում էին, որ «աղեկնարները չեն բռնուիր, բայց եթե մեկը յաջողի անոնց նիոյն կրնակը կամ ծեռը շիասած կամ չգիտցած տեղ ող ասեղ մի շուլլել (կարել), չը կրնար փախչի, և ասեղն շուլլողն ինչ որ ուզէ անկեց՝ կրերեն ուրիշ կմկան մը սմտուկեն»<sup>54</sup>:

<sup>49</sup> ԵԼ, հ. 2, էջ 177:

<sup>50</sup> Գյոզայան Գ., Աշվ. աշխ., էջ 230:

<sup>51</sup> Շամփկեան Յ.Կ., Աշվ. աշխ., էջ 152:

<sup>52</sup> ԵԼ, հ. 3, էջ 210-211:

<sup>53</sup> Նոյն տեղում, էջ 210:

<sup>54</sup> Շամփկեան Յ.Կ., Աշվ. աշխ., էջ 153:

Սատանայի՝ որպես չար ոգու գործառույթներից մեկը նրա անեծքն է իրեն քոնող, երեք կամ յոր տարի անվարձ աշխատեցնող մարդուն ու նրա ընտանիքին: Բանասացները հաստատում են, որ սատանաների անեծքները (բառը դատեք, դատարկ նոտեք, տառնդ հացը կամ ջորը պակասնեն, տաճու մոխիրը պակասսի, ամբողջական բաժակ, գդալ, ափսե, կճում, շերեփի կամ դույլ չունենար, աշքերդ բաց քնես, ծեր տունը դերը պակաս չըլլի) մինչև օրս էլ այդ ընտանիքների վրա են: Սակայն գրույցներից մեկում «Յոր տարին լրանալիս սատանան դատուում է դեպի Անախյանք և ասում. «Ի՞նչ իհմար մարդիկ եք, յոր տարի մնացի ձեզ մոտ, շիացրիք՝ ինչո՞ւ ջորին չի ծնում, որ ասեի», և անհայտանում է»<sup>55</sup>: Համաձայն մեկ այլ գրույցի՝ սատանան իրեն «կապանքներից ազատող» աղջկան խփում է, «աղջիկը կը դիմականակի»<sup>56</sup>:

Սատանաների կենցաղում լայն տարածում ունի հարսանիքը, շատ են այդ թեմայով գրույցները: Տարրեր ազգագրական շրջաններում տարրեր գունավորումներ են ստանում հարսանիքի հետ կապված մանրանասուրյունները՝ սկսած հագրւատից, երաժշտական գործիքներից մինչև ճոխ ու առատ սեղանները: Սարդը, իհմնականում ջրաղացանը, հովկը, միայնակ, պատահական անցորդը կիսարում կամ արթում վիճակում հանկարծ լսում է դիմումնայի ձայն, ակամատես է լինուն ուրախ հարսանիքի, ինքն էլ ակամայից կամ ստիպողաբար ներգրավվում է հարսանիքի մեջ: Ըստ հայտնի գրույցների՝ սատանաները շատ են սիրում հազմել մարդկանց, իհմնականում նորահարսների գգեստները և մասմակցել հարսանիքի: Դրանից խուսափելու հանար անհրաժեշտ է գգեստը հանելու ժամանակ խաշակներէլ<sup>57</sup>, Հիսուս Քրիստոս ասել կամ մեջը նշխարք դնել: Զրույցներից մեկում Ուստա Արքն սատանայի հարսանիքում նվագելիս նկատում է, որ դրանց հագին իրենց հարեանների հագուստներն են, մեկական կտոր կտրում է շորերից, առավոտյան համեմատում է և համոզվում, որ շորերը սատանաներն էին հագել: Կշտամբում է հարեաններին, թե ինչո՞ւ հանվելիս Հիսուս ու Քրիստոս չեն ասում, որ սատանաները իրենց «հալավանները» չտանեն<sup>58</sup>:

Զավախրում գրառած մի գրույց մանրանասն ներկայացնում է սատանայի հարսանիքի և եյուրասիբրոյան մի փայլրան օրինակ. «... Քիշմ անցավ՝ մեն ա դավուզունի ձես էկավ... Ետև նստան օր հաց ուտեն, իսծի հետ էկող մարդը մե մենծ լանգյառիմ՝ փլավ լցեց բերեց իսծի, օր ուտեն: Անոքի փորս վեց-վեց կենե, վրա լնկա, օր ուտեն: Չանչս կզարնեմ, տանիմ կը բերանս, կաշեմ՝ բան չկա, փորս բան չի երբա, ըլի օր, ըսի, քուս գլխսն է, չեմ կրնա ուտեն, աշքերս սրբեցի, գյառ-գյուլամիշ եղա, աշեցի օր փլաֆը ալի անակես գլխած առաջս է: Ավունմ զարկի, տարա բերանս, ծամեմ կը, կենա բերանս բան չկա: Աշեմ՝ անոնք հավար-հավար կուտեն: Ալ ամորուս ձես չեանեցի: Մե քիշմ անցավ, ան մարրը լյանգառովս՝ թիթիք բերեց: Ըսի՝ աս լավ է, մսերը կտոր-կտոր կառնեմ, կրծեմ կը, բյալիք բերանս բանմ՝ մտենի: Առա մսի կուտուր, տարա բերանս, ծամեմ կը, ակոնես իրար կը դիպչի, ցորեն հատիմ չափ բան ա փորս չի երբա: Զարասոր բերանս սրբեցի, անորի ծառակ ետ քաշվա, անոնք կերան, խմեցին, էլան քիշմ ալ քոան ու քաշվան գնացին»<sup>59</sup>:

Սնահավատական գրույցներից և ազգագրական նմանատիպ նյութերից հայտնի է, որ սատանաները սնկում են իհմնականում հալվայով, խավիծով, ծննդկաների փայծաղով՝ լարդով: Մ. Արեւյանը ներկայացնում է նի գրույց, որտեղ սատանա-

<sup>55</sup> ԵԼ, հ. 2, էջ 177:

<sup>56</sup> ՄԱ, հ. Է, էջ 89:

<sup>57</sup> Ուստի բանահյուսության մեջ ևս տարւածված է այն պատկերացումը, որ սատանան տանում է այն ամենը, ինչը օրինված է: *Померанцесса Э.В., Мифологические персонажи в русском фольклоре, М., 1975, с. 119.*

<sup>58</sup> ԵԼ, հ. 1, էջ 218:

<sup>59</sup> ԵԼ, հ. 1, էջ 225:

